

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013 թ.

N -----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2330-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող մի շարք հողամասեր փոխադրել այլ նշանակության հողամասերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ գերեզմանատների կազմավորման (կազմակերպման) այդ թվում՝ դրանց պահպանման և շահագործման, գերեզմանատների հողերի օգտագործման, հատակագծերի հաստատման ընթացքում հաշվի առնել էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգ պահպանման հետ կապված հարցերը և իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն:

2) սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

S. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Որոշման նախագծով առաջարկվում է ընդլայնել գոյություն ունեցող գերեզմանատների տարածքները՝ դրանց կից անմշակ, ազատ և անօգտագործելի հողերի հաշվին:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան՝ հարցը ներկայացվել է ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը, որի արդյունքներով ՀՀ քաղաքաշինության նախարարի 02.07.2013 թվականի թիվ 01/11/4104-13 գրությամբ տրամադրվել է նշված հանձնաժողովի դրական եզրակացությունը և հանձնաժողովի անդամների հավանությանն արժանացած՝ Երևան քաղաքի ավագանու <Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին> որոշման նախագիծը:

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը չի հակասում Երևան քաղաքի գլխավոր հատակագծին և որոշման նախագծի ընդունմամբ որոշ չափով կլուծվի բաց գերեզմանատներ ունենալու խնդիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հոդամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հոդամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ց Ա Ն Կ

Երևան քաղաքում որոշ հողամասերի նպատակային նշանակության փոփոխության

N/N	Կառուցապատող	Հասցեն	Հողամասի մակերեսը	Ներկայիս նպատակային նշանակությունը	Առաջարկվող նպատակային նշանակությունը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7
1.	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	«Սիլիկյան» գերեզմանատուն 3-րդ գյուղ	28833.57քմ	գյուղատնտեսական	Հատուկ պահպանվող	Գերեզմանատան տարածքի ընդլայնում
2.	Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	«Շահումյան-2» գերեզմանատուն «Կաթ» գործարանին հարող տարածք	33220.78քմ	Արդյունաբերական, ընդերքոց տագործման և այլ արտադրական	Հատուկ պահպանվող	Գերեզմանատան տարածքի ընդլայնում
3.	Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	«Կենտրոնական» գերեզմանատուն Դավիթ Բեկ փողոցին հարող տարածք	1859.95քմ	Բնակավայրերի	Հատուկ պահպանվող	Գերեզմանատան տարածքի ընդլայնում